

# ԹԵՄԱ 4.

## ՀԱՄԱՅՆՔԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

### Բովանդակություն

Ի՞նչ է համայնքի տնտեսական զարգացումը .....	2
Համայնքի տնտեսական զարգացման վրա ազդող տեղական գործոնները.....	4
ՏԻՄ-երի դերը համայնքի տնտեսական զարգացման գործում.....	6
Համայնքային ֆինանսները և տնտեսական զարգացումը .....	8
Վարչատարածքային բարեփոխումների տնտեսական ազդեցությունը նոր ձևավորված համայնքի վրա .....	9
Գրականություն .....	11

## Ի՞նչ է համայնքի տնտեսական զարգացումը

**Տնտեսական զարգացումը** սահմանող տարբեր ձևակերպումներ կան, որոնց հիմնական բնորոշիչը դա տնտեսության դինամիկ առաջընթացն է, որի շնորհիվ տեղի են ունենում բնակչության կենսապահովման կարողությունների մեծացում՝ դրանց ընդլայնման, նորացման և բազմազանեցման ճանապարհով: Առավել պարզ ձևակերպմամբ՝ իրականացվում են մարդկանց կենսապայմանների և ապրելակերպի ընդհանուր բարելավումներ, ստեղծվում են մարդկային ներուժի լիարժեք իրացման նպաստավոր նախադրյալներ ու պայմաններ:

Տնտեսության զարգացման պատասխանատվությունը բազմաբևեռ է: Հիմնական բեռը դրված է պետական կառավարման մակարդակի վրա, քանի որ այն տիրապետում է տնտեսության զարգացման էական լծակների՝ օրենսդրական կարգավորում, հարկաբյուջետային և ներդրումային քաղաքականություն, արտաքին առևտրի խթանում, աջակցության բազմաթիվ այլ մեխանիզմներ:

Տնտեսական զարգացման մյուս մակարդակը համայնքն է: Սա այն անմիջական ազդեցության միջավայրն է, որը էական ազդեցություն ունի ձեռնարկությունների զարգացման ընթացքի, հաջողությունների կամ ձախողումների վրա: Ուստի ձեռնարկությունների զարգացման համար բարենպաստ միջավայրի ձևավորումը տեղական տնտեսական զարգացման կարևոր նախադրյալներից է, որտեղ նշանակալի դեր են խաղում ինչպես անհրաժեշտ ռեսուրսների հասանելիությունը, այնպես էլ գործարար միջավայրի ձևավորմանն ու զարգացմանն ուղղված ծրագրերը, բիզնես նախաձեռնությունների, նորարական մոտեցումների խրախուսումը և թիրախային աջակցությունը: Առկա սոցիալ-տնտեսական ներուժի հիման վրա համայնքի տնտեսական գրավչության և մրցունակության նոր հնարավորություններ ստեղծելու ՏԻՄ-երի կարողությունը, ձեռքբերված հաջողությունների հանրայնացումը կարող են ակտիվացնել գործարար միջավայրը և համայնքը դարձնել հրապուրիչ ներդրումների համար:

**Համայնքի տնտեսական զարգացումը կամ տեղական տնտեսական զարգացումը** ընդգրկում և մասնակցային մի գործընթաց է, որտեղ համայնքները բացահայտում և նախաձեռնում են տնտեսական, սոցիալական, բնապահպանական և այլ խնդիրների իրենց սեփական լուծումները՝ հասնելու առողջ, տնտեսապես կենսունակ համայնքների ձևավորմանը: Այս գործընթացում է, որ, տարբեր դերակատարների մասնակցությամբ, համայնքները տնտեսական բազմակողմանի լուծումների միջոցով կարողանում են ապահովել տեղական ռեսուրսների և կարողությունների իրացման հնարավորությունները՝ երկարաժամկետ կտրվածքով մարդկանց կյանքի որակի բարելավման ուղղությամբ: Այդ դերակատարներն են՝ ՏԻՄ-երը, գործարար հատվածը, ֆինանսական կազմակերպությունները, քաղաքացիական հասարակության կազմակերպությունները (ՔՀԿ-ները), պետական մարմինները և միջազգային

կառույցները, ինչպես նաև այն բոլոր շահագրգիռ կողմերը, որոնք շատ թե քիչ ազդեցություն ունեն համայնքի տնտեսական կյանքի վրա (օրինակ՝ ԲՈՒՀ-երը, միջին մասնագիտական կրթության հաստատությունները, մեծահասակների կրթության կենտրոնները, արհեստակցական միությունները և այլն) (տե՛ս գծապատկեր 1):


**Գծապատկեր 1. Համայնքի տնտեսական զարգացման դերակատարների և նրանց ազդեցության ոլորտների օրինակ**



Այդուհանդերձ, տեղական տնտեսական զարգացումը հնարավոր է ապահովել միայն վերոնշյալ դերակատարների նպատակները համադրելու և փոխշահավետ համագործակցություն ձևավորելու միջոցով:

Համայնքի տնտեսական զարգացման հաջողությունը մեծապես կախված է նաև համայնքային իշխանությունների կողմից տեղական տնտեսական կարողությունների ամրապնդումից և զարգացումից: Ներդրումային միջավայրի բարելավումը, նոր ներդրողների ներգրավումը, գործող ձեռնարկությունների արտադրողականության ու մրցունակության բարձրացմանը նպաստելը էական խթան կարող են հանդիսանալ նոր բիզնես միավորների և աշխատատեղերի ստեղծման համար: Այս առումով կարելի առանձնացնել հետևյալ թիրախները՝ (տե՛ս գծապատկեր 2):

**Գծապատկեր 2. Տեղական տնտեսական զարգացման թիրախները<sup>1</sup>**



Հատկանշական է, որ նշված թիրախների սահմանումը պետք է կատարվի՝ հաշվի առնելով համայնքի տեղական առանձնահատկությունները: Օրինակ՝ նոր ձեռնարկությունների ներգրավումը առավել արդյունավետ է դիտարկել այնպիսի համայնքներում, որտեղ ձեռնարկությունները թույլ են զարգացած, իսկ այն համայնքները, որտեղ կան ուժեղ բիզնես միավորներ, առավել նպատակահարմար է նպաստել դրանց զարգացմանը և մրցունակության բարձրացմանը:

Յուրաքանչյուր համայնք ունի յուրօրինակ տեղային պայմաններ, որոնք նպաստում կամ նվազեցնում են տեղական տնտեսական զարգացման հնարավորությունները, և դրանցով են պայմանավորված համայնքի համեմատական առավելությունները և նրա ունակությունները ներդրումների ներգրավման գործում: Այս գործոններով է պայմանավորված նաև համայնքի տնտեսական զարգացման ռազմավարությունը՝ հիմնված նրա ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների ամբողջական վերլուծության վրա:

**Համայնքի տնտեսական զարգացման վրա ազդող տեղական գործոնները**


Համայնքի տնտեսական զարգացումը պայմանավորված է տարբեր գործոններով, որոնք մեծ ներգործություն ունեն ինչպես բիզնես միավորների մրցունակության բարձրացման, այնպես էլ նրանց գործունեության համար նպաստավոր միջավայրի

<sup>1</sup> Dr Jörg Meyer-Stamer, The Hexagon of Local Economic Development, [https://mesopartner.com/fileadmin/media\\_center/Working\\_papers/mp-wp03\\_01.pdf](https://mesopartner.com/fileadmin/media_center/Working_papers/mp-wp03_01.pdf) p.7

ծնավորման գործում: Ստորև դիտարկենք համայնքի տնտեսական զարգացման տեղական հիմնական գործոնները:

**Համայնքի տնտեսական զարգացման տեղական գործոնները** պայմանականորեն բաժանվում են 2 խմբի՝ շոշափելի տեղական գործոններ և ոչ շոշափելի տեղական գործոններ, վերջինս ևս բաժանվում է 2 ենթախմբի՝ ոչ շոշափելի տեղական գործոններ բիզնեսի համար և ոչ շոշափելի տեղական գործոններ անհատների համար (տե՛ս գծապատկեր 3):

**Գծապատկեր 3. Համայնքի տնտեսական զարգացման տեղական գործոնները<sup>2</sup>**



**Շոշափելի տեղական գործոնները** առաջնահերթ ներառում են համայնքի աշխարհագրական դիրքի, բնակլիմայական պայմանների, սոցիալ-տնտեսական ենթակառուցվածքների, հանրային ծառայությունների, տեղական հարկերի, տուրքերի ու վճարների և ներքին այլ ռեսուրսների մասին տվյալները: Համայնքում տնտեսական մրցունակությունը բարձրացնելու գործում համայնքի ճանապարհային ցանցի վիճակը, գազամատակարարման, էլեկտրամատակարարման և մյուս հանրային ծառայությունների հասանելիությունը, որակյալ աշխատուժի առկայությունը էական ազդեցություն ունեն: Ձեռնարկությունների ծախսերը շեշտակի աճում են, եթե ենթակառուցվածքների

<sup>2</sup> Dr Jörg Meyer-Stamer, The Hexagon of Local Economic Development, [https://mesopartner.com/fileadmin/media\\_center/Working\\_papers/mp-wp03\\_01.pdf](https://mesopartner.com/fileadmin/media_center/Working_papers/mp-wp03_01.pdf) p.9

հասանելիության և որակյալ ռեսուրսների ապահովումը լրացուցիչ ներդրումների հետ է կապվում: Դրանք կարող են այնքան մեծանալ, որ ձեռնարկությունը այլ համայնք տեղափոխվելու որոշում կայացնի:

**Ոչ շոշափելի տեղական գործոններ բիզնեսի համար** — Բացի ենթակառուցվածքների հասանելիությունից և ռեսուրսների մատակարարումից՝ ձեռնարկությունները նպաստավոր գործարար միջավայրի կարիք ունեն, որի վրա որոշակիորեն կարող է ազդել ՏԻՄ-երի գործունեությունը՝ նրանց կողմից իրականացվող ծրագրերը, կայացվող որոշումների որակը, համայնքի ֆինանսական կառավարման արդյունավետությունը և այլն: Տեղական իշխանությունների որոշումները պետք է նպաստեն և ոչ թե լրացուցիչ խոչընդոտներ առաջացնեն մասնավոր հատվածի գործունեության համար: Տեղական բյուջետային միջոցների թափանցիկ և նպատակային օգտագործումը շատ կարևոր է գործարար միջավայրի կայացման, համայնք-մասնավոր հատված համագործակցության ձևավորման համար:

**Ոչ շոշափելի տեղական գործոններ անհատների համար** — Ձեռնարկությունների մրցունակության ապահովման համար բավարար չէ միջոցներ ուղղել միայն ձեռնարկությունների զարգացմանը: Անհրաժեշտ են նաև պայմաններ, որտեղ ձեռնարկատերը, ձեռնարկության աշխատակիցները և նրանց ընտանիքի անդամները առողջ ու բարեկեցիկ ապրելու հնարավորություն կունենան, երեխաները որակյալ կրթություն կստանան, համայնքային ծառայությունները որակյալ և մատչելի կլինեն, հարուստ մշակութային կյանք կլինի և այլն:

## **ՏԻՄ-երի դերը համայնքի տնտեսական զարգացման գործում**

Ինչպես նշվեց վերևում, համայնքի տնտեսական զարգացման բնագավառում առկա են տարբեր դերակատարներ, որոնց համախմբված և համակարգված գործողությունների արդյունքում է միայն հնարավոր տեղական մակարդակում հասնել տնտեսական հաջողությունների:

«Օրենսդրությամբ տարբեր բնագավառներում ՏԻՄ-երին վերապահված լիազորությունների իրականացումը անմիջական ազդեցություն ունի համայնքի տնտեսական զարգացման վրա: Քաղաքաշինության, գյուղատնտեսության, հողօգտագործման, առևտրի, զբոսաշրջության, կոմունալ տնտեսության և այլ բնագավառներում ՏԻՄ-երի կողմից կայացվող որոշումները կարող են ինչպես խթանել, այնպես էլ խոչընդոտել համայնքի տնտեսական զարգացմանը: Այնուհանդերձ, որպես համայնքի տնտեսական զարգացման առաջնային և կարևոր դերակատար, այս

քնագավառում ՏԻՄ-երի լիազորությունները<sup>3</sup> դեռևս հստակեցման և դրանց շրջանակների ընդլայնման կարիք ունեն:

Այս առումով կայուն տեղական տնտեսական զարգացումը ներառում է ՏԻՄ-երի համագործակցությունը տարբեր գործընկերների (պետություն, մասնավոր հատված, հանրային կազմակերպություններ, ՔՀԿ-ներ) հետ՝ բարելավելու տեղական գործարար միջավայրը և այդպիսով ստեղծելու պայմաններ տնտեսական զարգացման և զբաղվածության ապահովման համար: ՏԻՄ-երը պետք է տեղական տնտեսական զարգացման ծրագրերը մշակեն՝ պատշաճ կառավարման, հանրային և մասնավոր հատվածների երկխոսության սկզբունքներին համապատասխան, հստակեցնեն կատարվելիք գործնական քայլերը և վերջնական արդյունքում առաջարկեն նախագծեր, որոնք նպաստում են համայնքում տնտեսական աճին, զարգացմանն ու զբաղվածությանը: ՏԻՄ-երը այս գործընթացի շրջանակում պետք է ձգտեն դառնալ ավելի թափանցիկ, գործուն և առավել բարեհաճ բիզնեսի նկատմամբ:

Այնուամենայնիվ, ՏԻՄ-երի դերը չպետք է սահմանափակվի միայն իրավական կարգավորումների իրականացման, համայնքի տարբեր դերակատարների միջև համագործակցության ձևավորման գործառույթներով: Համայնքային իշխանությունները կարող են հանդես գալ տնտեսական զարգացման վրա անմիջական ազդեցության մի շարք նախաձեռնություններով, օրինակ՝

- **Ենթակառուցվածքների բարելավում** — ներդրումներ ներհամայնքային ճանապարհների, ջրամատակարարման, ջրահեռացման ցանցերի, հեռահաղորդակցության միջոցների ապահովման ուղղությամբ,
- **Մարդկային կապիտալի զարգացում** — ներդրումներ մասնագիտական կրթության ոլորտում՝ ապահովելու աշխատուժի մասնագիտական վերապատրաստման և որակավորման, կարողությունների զարգացման հնարավորությունները,
- **Տարածքային պլանավորում** — համայնքային գույքի, տարածքների արդյունավետ կառավարում, քաղաքաշինական զարգացման ծրագրերի իրականացում:

Այդ նպատակով 2018 թվականից ՀՀ մի շարք համայնքներում ներդրվեց համայնքի տնտեսական զարգացման պատասխանատուի ինստիտուտը, որը հնարավորություն կտա ՏԻՄ-երին տեղական մակարդակում իրենց մրցակցային առավելությունների հիման վրա մշակել և կյանքի կոչել տեղական տնտեսական զարգացման տարբեր ծրագրեր: Այսօրինակ նախագծերը ՏԻՄ-երի կողմից պետք է մշակվեն տնտեսավարողների հետ մասնակցային քննարկումների արդյունքում և իրականացվեն նպատակային, համայնքի տնտեսական զարգացման թիրախներին համահունչ, ինչը

<sup>3</sup> «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդված

կօզնի դարձնել համայնքը առավել գրավիչ ներդրումների համար և կստեղծվեն գործարարության նոր հնարավորություններ:

## **Համայնքային ֆինանսները և տնտեսական զարգացումը**

ՏԻՄ-երի կողմից տեղական տնտեսական զարգացման նախաձեռնությունների, ենթակառուցվածքային ներդրումների իրականացման հնարավորությունները կանխորոշվում են համայնքի բյուջետային միջոցների չափով: Ուստի, շատ կարևոր է համայնքի բյուջեի եկամուտների ձևավորման աղբյուրների ու միջոցների ավելացումը և բազմազանեցումը:

«Օրենսդրությունը սահմանում է համայնքի բյուջեի ձևավորման աղբյուրները<sup>4</sup>, որտեղ ներկայացված են համայնքների բյուջեներին օրենքով և իրավական այլ ակտերով ամրագրվող մուտքերը: Ի թիվս հարկային եկամուտների մյուս տեսակների, որպես համայնքի բյուջեի եկամտի աղբյուր, նշված են նաև եկամտային հարկից և շահութահարկից կատարվող մասհանումները: Ընդ որում, դրանց չափերը սահմանվում են յուրաքանչյուր տարվա պետական բյուջեի մասին օրենքով: Օրենքի ընձեռած հնարավորություններով հանդերձ՝ ամբողջ հանրապետության մակարդակով այս մասհանումներն առայժմ չեն կիրառվում: Համայնքային բյուջե չեն մուտքագրվում նաև քնապահպանական վճարներից մասհանումները, որը ևս օրենքով սահմանված եկամտատեսակ է:

Փաստացի, ներկայումս համայնքի բյուջեի ձևավորման աղբյուրների առումով ՏԻՄ-երը կտրված են համայնքում ծավալվող տնտեսական գործունեությունից, այդ իսկ պատճառով ուղղակի շահագրգռվածություն չունեն իրենց համայնքներում գործարարության ակտիվացման համար, քանի որ բյուջետային մուտքերը դրանից առանձնապես չեն աճում: Թերևս, միայն ՏԻՄ-երի կողմից յուրաքանչյուր տարի սահմանվող տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը կարող են որոշակի խթանիչ ազդեցություն ունենալ փոքր և միջին ձեռնարկությունների տնտեսական գործունեության վրա, ուստի նշված դրույքաչափերը սահմանելիս անհրաժեշտ է խելամիտ մոտեցում ցուցաբերել՝ հաշվարկելով դրանց ֆինանսատնտեսական ազդեցությունը ինչպես համայնքի բյուջեի, այնպես էլ համայնքի գործարար միջավայրի վրա:

Եկամտի վերոնշյալ աղբյուրները կարող են էական դեր խաղալ համայնքում գործարարության զարգացման գործում, քանի որ այս դեպքում ՏԻՄ-երը անմիջականորեն շահագրգռված կլինեն և կփորձեն նպաստավոր պայմաններ ստեղծել դրա համար:

---

<sup>4</sup> «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդված,  
«ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 28<sup>1</sup>-րդ հոդված



Շատ կարևոր է նաև, որ պետական հարկերից ու վճարներից մասհանումների տոկոսադրույքները հստակորեն սահմանվեն «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքով և ոչ թե յուրաքանչյուր տարվա պետական բյուջեի մասին օրենքով: Սա ՏԻՄ-երին հնարավորություն կտա ավելի երկարաժամկետ պլանավորել համայնքի սոցիալ-տնտեսական զարգացումը և նախօրոք կանխատեսել, թե ինչ եկամուտներ են սկնկավում նախատեսվող ծրագրերն իրականացնելու համար: Իսկ եթե պետական հարկերից ու վճարներից մասհանումների տոկոսադրույքների չափերը շարունակեն սահմանվել ամեն տարվա պետական բյուջեի մասին օրենքով, ապա անորոշության աստիճանի բարձրացման տեսանկյունից դա անկասկած բացասաբար կանդրադառնա հատկապես համայնքի զարգացման հեռանկարային և միջնաժամկետ պլանավորման վրա:<sup>5</sup>

## **Վարչատարածքային բարեփոխումների տնտեսական ազդեցությունը նոր ձևավորված համայնքի վրա**

ՀՀ-ում վարչատարածքային բարեփոխումների (մասնավորապես, համայնքների խոշորացման) առաջնային խնդիրներից մեկը նոր ձևավորված համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերում առկա ռեսուրսների մոբիլիզացումն է, որը թույլ կտա առավել արդյունավետ լուծել համայնքային ընդհանուր խնդիրները՝ մարդկային, ֆինանսական ու տնտեսական ներուժի համախմբման շնորհիվ: Այն ամրագրված է նաև «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքում, համայնքների միավորման և բաժանման սկզբունքների տեսքով<sup>6</sup>:

Հաշվի առնելով, որ համայնքի բնակչության բարեկեցությունը մեծապես պայմանավորված է նրա տնտեսական մրցունակությամբ և բիզնեսի նկատմամբ գրավիչ լինելով՝ վարչատարածքային բարեփոխումները էական դրական ազդեցություն կարող են ունենալ բազմաբնակավայր համայնքների տնտեսական զարգացման վրա և այնպիսի առավելություններ ընձեռեն, ինչպիսիք են՝

**Տնտեսության զարգացման մասնագիտական կարողություններ:** Եթե փոքր գյուղերում դժվար է գտնել մասնագետներ, ովքեր կարող են զարգացման ծրագրեր նախագծել, կառավարել, վերահսկել, ապա բազմաբնակավայր համայնքներում համապատասխան մասնագիտական կարողություններ ունեցող կադրերի առկայությունը առավել իրատեսական է: Ավելի մեծ են նաև համայնքի ֆինանսական հնարավորությունները՝ այդ որակյալ կադրերին ներգրավելու հարցում:

<sup>5</sup> Համայնքների տնտեսական զարգացման նոր կառուցակարգերի գործարկման անհրաժեշտությունը ՀՀ-ում, Ռ. Հայրապետյան, Ա. Ավետյան, Բանբեր, ՀՊՏՀ 2017.4 էջ 51

<sup>6</sup> «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքի 5.2-րդ հոդված

**Համայնքային ավելի մեծ ֆինանսական ռեսուրսներ:** Վարչատարածքային բարեփոխումների արդյունքում ձևավորված նոր բազմաբնակավայր համայնքների բյուջետային եկամուտները, ինչպես սեփական եկամուտների, այնպես էլ պետական բյուջեից տրվող հատկացումների մասով, հիմնականում ունեն աճի դինամիկա: Եկամուտների աճը, արտաքին աղբյուրներից ֆինանսների ներգրավման նոր հնարավորությունները և բյուջետային ծախսերի արդյունավետության բարձրացումը բազմաբնակավայր համայնքներին թույլ կտան ֆինանսավորել ոչ միայն ընթացիկ ծախսերը, այլ նաև իրականացնել ենթակառուցվածքների բարելավման կապիտալ ծրագրեր, որոնք կարող են զգալիորեն նպաստել համայնքում տնտեսության զարգացմանը: Համայնքները հնարավորություն կունենան պետության և միջազգային կազմակերպությունների կողմից իրականացվող խոշորածավալ ներդրումային ծրագրերում ապահովել համայնքի կողմից պահանջվող ներդրումները և համաֆինանսավորումը:

**Դիրքերի ամրապնդում:** Բազմաբնակավայր համայնքները խոշոր ներդրողների, մթերողների, մատակարարների ներգրավման ավելի մեծ հնարավորություն ունեն, քանի որ հանդես են գալիս ավելի մեծ թվով արտադրողների կամ սպառողների անունից: Այդպիսով մեծանում է ենթակառուցվածքային մեծամասշտաբ ծրագրեր իրականացնելու հնարավորությունը, քանի որ նախկինում փոքր համայնքները, օրինակ, ջրագիծ կամ ճանապարհ կառուցելը չէին կարողանում տնտեսապես հիմնավորել՝ բնակչության և շահառուների փոքր քանակի պատճառով:

Ամփոփելով՝ անհրաժեշտ է նշել, որ տեղական տնտեսական զարգացումը երկարատև և անընդհատ գործընթաց է, որտեղ համայնքի տնտեսական զարգացման երկարաժամկետ և միջնաժամկետ ծրագրերի մշակման և իրականացման գործում վճռորոշ դեր ունի ռազմավարական պլանավորման և մասնակցային կառավարման գործիքների կիրառումը: Մասնակցային, միջավայրի և կարիքների վերլուծությամբ մշակված տնտեսական զարգացման ռազմավարական ծրագրերը մեծապես կօգնեն համայնքի տնտեսական զարգացման բոլոր դերակատարներին՝ առավել արդյունավետ և նպատակային կազմակերպելու իրենց գործունեությունը:

## Գրականություն

1. «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, 16.12.2016թ. փոփոխություններով
2. «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք
3. «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենք 09.06.2017թ. փոփոխություններով
4. Հ. Աղաջանյան և ուրիշներ, Տնտեսական զարգացում, «Ամբերդ» մատենաշար 11, 2014, [https://asue.am/upload/files/amberd-economic-policy/Agadjanyan\\_Repaired\\_.pdf](https://asue.am/upload/files/amberd-economic-policy/Agadjanyan_Repaired_.pdf)
5. Համայնքի ղեկավարներ հանուն տնտեսական զարգացման (ՀՀՏՁ). Ընդհանուր սկզբունքներ և մոտեցումներ <http://m4eg.eu/media/1996/m4eg-concept-arm.pdf>
6. Տնտեսության զարգացումը համայնքներում, ուղեցույց, Վ. Կարապետյան, ԳՄՀԸ «Լավ տեղական ինքնակառավարում Հարավային Կովկասում» ծրագիր, Երևան, 2017
7. Local Economic Development Training Module, <http://localizingthesdgs.org/library/254/Local-Economic-Development-Training-Module.pdf>
8. Jacek Sierak. The Role of Local Government in the Process of Stimulating the Development of the Local Economy, [http://kolegia.sgh.waw.pl/pl/KZiF/czasopisma/Journal\\_of\\_Management\\_and\\_Financial\\_Sciences\\_JMFS/Documents/Jacek%20Sierak\\_JMFS\\_25.pdf](http://kolegia.sgh.waw.pl/pl/KZiF/czasopisma/Journal_of_Management_and_Financial_Sciences_JMFS/Documents/Jacek%20Sierak_JMFS_25.pdf)
9. Համայնքների տնտեսական զարգացման նոր կառուցակարգերի գործարկման անհրաժեշտությունը ՀՀ-ում, Ռ. Հայրապետյան, Ա. Ավետյան, Բանբեր, ՀՊՏՀ 2017.4
10. <https://www.slideshare.net/led4lgus/the-hexagon-of-local-economic-development-and-led-in-south-africa>
11. Dr Jörg Meyer-Stamer, The Hexagon of Local Economic Development, [https://mesopartner.com/fileadmin/media\\_center/Working\\_papers/mp-wp03\\_01.pdf](https://mesopartner.com/fileadmin/media_center/Working_papers/mp-wp03_01.pdf)